



ԲՎՐՁՐԱԳՈՒՅՆ ԴՎՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ք. Երևան
25 հոկտեմբերի 2021թ.

ԲԴԽ-60-Ո-Կ-21

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՎԵՐԱՔՆՆԻՋ ՔՐԵՎԿԱՆ ԴՎՏԱՐԱԿԻ ԴՎՏԱԿՈՐ ՍԵՐՁԵՅ ՍՎՐԱՔՅԱՆԻՆ ԿՎՐԱՎՊԱՅՎԿԱՆ
ՊՎՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ԶԱՐՑԻ ՎԵՐԱՔԵՐՅԱԼ

ԲՎՐՁՐԱԳՈՒՅՆ ԴՎՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ՝
ՅԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ՝

նախագահությունը՝

*Քարճրագույն դասական խորհրդի
նախագահի պաշտոնակատար*

Գ. Զհանգիրյանի,

մասնակցությունը՝

անդամներ

- Գ. Բեքմեզյանի,
- Դ. Խաչատրյանի,
- Ս. Մակյանի,
- Լ. Մելիքջանյանի,
- Ս. Միքայելյան,
- Վ. Մխիթարյանի,

*Արդարադատության նախարարի
սեղակալ*

Ս. Գրիգորյանի,

*Արդարադատության նախարարի
ներկայացուցիչ*

Դ. Գասպարյանի,

*Վերաբննիչ քրեական դատարանի
դասավոր*

Ս. Մարաբյանի,

*Վերաբննիչ քրեական դատարանի
դասավորի ներկայացուցիչ*

Ս. Շխիմյանի,

Քարտուղարությունը՝

Վ. Շիլաջյանի

դռնբաց նիստում, բննության առնելով Արդարադատության նախարարի պաշտոնակատարի պարտականությունները կատարող Ք. Գրիգորյանի «Վերաբնդիչ քրեական դատարանի դատավոր Սերգեյ Մարաբյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությամբ ՀՀ Բարձրագույն դատական խորհրդին դիմելու մասին» 2021 թվականի հունիսի 26-ի N-60Վ որոշումը և կից ներկայացված փաստաթղթերը,

Պ Ա Ր Ձ Ե Ց .

1.Գործի նախապատմությունը.

Կարգապահական վարույթ հարուցելու առիթ է հանդիսացել Գլխավոր դատախազի կողմից Արդարադատության նախարարին (այսուհետև նաև՝ Նախարար) 22. 02. 2021 թվականին ներկայացրած հաղորդումը՝ Վերաբնդիչ քրեական դատարանի (այսուհետև նաև՝ Դատարան) դատավոր Սերգեյ Մարաբյանին (այսուհետև նաև՝ Դատավոր) նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ:

Նախարարի 24. 05. 2021 թվականի N40-Վ որոշմամբ Դատավորի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ:

Նախարարի 26. 07. 2021 թվականի N60-Վ որոշմամբ միջնորդություն է ներկայացվել Բարձրագույն դատական խորհուրդ՝ Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

2.Վարույթ հարուցած մարմնի դիրքորոշումը.

Նախարարը, վկայակոչելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետև՝ Օրենսգրք) 135-րդ հոդվածի 2-րդ մասը, Օրենսգրքի 278-րդ հոդվածի 1-ին մասը, 280-րդ հոդվածը, 358-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերը, Վճռաբեկ դատարանի մի շարք նախադեպային որոշումներ, նշել է. «Օրենսգրքի հասկացութային համակարգի վերլուծությամբ դատարանների կողմից բուն արդարադատության իրականացման գործառույթի և մինչդասական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելու հիմնական տարբերակիչ հասկանիշներից մեկն էլ կայանում է հենց նրանում, որ դատարանն արդարադատություն իրականացնելիս ըստ էության բննում է մեղադրանքը, իսկ մինչդասական վարույթի ընթացքում դատական վերահսկողությունն իրականացնելիս (սվյալ դեպքում՝ նախնական դատական վերահսկողության ռեժիմով) դատարանը բննում և լուծում է կոնկրետ իր իրավասությանը հանձնված դատավարական գործողությունների կամ հարկադրանքի միջոցների կիրառման օրինականությունը, որի բովանդակության և դրա խաթարված սահմաններով կիրառումը կարող է հանգեցնել քրեական դատավարության փուլային համակարգի և դրանցից յուրաքանչյուրի խնդիրների խեղաթյուրմանը:

Ի թիվս այլի, վերոգրյալ կառուցակարգից է բխում այն գաղափարը, որ անձի նկատմամբ խախտման միջոց կալանավորման կիրառման հարցի լուծման ժամանակ վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացվող փաստական տվյալները պետք է բավարարեն սույն հիմնավոր կասկածի առկայության պահանջին, այսինքն՝ վերջինիս կողմից ներկայացված փաստական տվյալները պետք է բավարար լինեն, որպեսզի դատարանի կողմից հնարավոր լինի փաստել

մեղադրյալի առնչությունը նրան մեղսագրվող արարքին: Ալնհայտորեն, նման ապացուցողական շեմն էականորեն ցածր է անձի նկատմամբ մեղադրական դատավճիռ կայացնելու համար պահանջվող ապացուցողական շեմից և մինչդասական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության սահմաններում հիմնավոր կասկածից վեր շեմի սահմանումը ուղղակիորեն դուրս կգա նշված գործառույթի սահմաններից:

Անձին կալանավորելու պայման հանդիսացող հիմնավոր կասկածն, ըստ էության, արձանագրված է Սարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ և վերջինիս բովանդակությունը հանգում է նրան, որ անձի կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկածը իրենից ներկայացնում է այնպիսի փաստերի և սեղեկությունների ամբողջություն, որը թույլ կտա եզրակացնել, որ անձը կարող է կատարած լինել իրեն վերագրվող արարքը (*Մեխիեթին Դեմիրթաշն ընդդեմ Թուրքիայի, զանգաս թիվ 14305/17, [Մեծ պալատ], §314; Իլգար Մամադովն ընդդեմ Ադրբեջանի, զանգաս թիվ 15172/13, §88; Մեհմեթ Էրդազոզն ընդդեմ Թուրքիայի, զանգաս թիվ 21890/93, §51):»:*

Նախարարը միաժամանակ հղում է կատարել Բարձրագույն դատական խորհուրդի 2021 թվականի հուլիսի 8-ի թիվ ԲԴԽ-33-Ո-Կ-12 որոշմանը՝ նշելով. ««Ապացույցը գնահատող անձը մինչև դրանց հետազոտումը պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում չպետք է կանխակալ մոտեցում ցուցաբերի ապացույցներից, չպետք է դրանց որոշ մասին մշտնջենքի նկատմամբ առավել կամ նվազ նշանակություն տա: Միևնույն ժամանակ, ներքին համոզմամբ ապացույցների ազատ գնահատումը ենթադրում է, որ ապացույցը գնահատող անձը կաշկանդված չէ սվյալ ապացույցին դատավարության նախորդ փուլերում կամ սվյալ փուլի շրջանակներում այլ անձանց կամ մարմինների սված գնահատականներով: Նախապես հաստատված ապացույցի ուժ չունենալու օրենսդրական արգելքը բացառում է որևէ ապացույցի նկատմամբ կանխակալ մոտեցում ցուցաբերելը (մշտն ապացույցների նկատմամբ այդ փաստական սվյալի ապացուցողական արժեքին առավելություն վերագրելը կամ այդ արժեքը նվազեցնելը), քանի դեռ այդ ապացույցը քրեադատական օրենսգրքով ամրագրված ընթացակարգով օրինականության, մրցակցության և կողմերի իրավահավասարության, մեղադրյալի պաշտպանության իրավունքի ապահովման և այլ սկզբունքների պահպանմամբ չի հետազոտվել պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում»:

Միաժամանակ Նախարարը սույն կարգապահական վարույթի հիմք հանդիսացող որոշման վերաբերյալ հայտնել է հետևյալը. «Վերոգրյալ որոշմամբ Դատարանի կողմից դատական ստուգման ընթացքում խախտման միջոցի կիրառման պայմանները գնահատելիս, փաստարկվել է առանձին փաստական սվյալի առավել հավաստի լինելը և դրա արժանահավաստության վերաբերյալ հետևություններով պայմանավորվել է նաև ընդհանրապես անձին մեղսագրվող արարքում վերջինիս առնչությունը: Այսինքն, Դատարանը միջնորդությանը կից ներկայացված փաստական սվյալներն ամբողջությամբ և իրենց համակցությամբ չդիտարկելու արդյունքում, առանձին փաստական սվյալ գնահատել է մեկուսի, ինչի արդյունքում ինքն իրեն զրկել է հիմնավորված և պատճառաբանված դատական ակտ կայացնելու հնարավորությունից:

Վերոհիշյալի հաշվառմամբ զսնում ենք, որ թեև կալանքի պայման հանդիսացող կասկածի աստիճանի ապացուցվածության գնահատման առնչությամբ բավարարությունը կապված է դրա հիմքում դրվող նյութի (փաստական սվյալների) արժանահավաստության հասկանիչի հետ, սակայն հարկ է ընդգծել, որ դատավարության սվյալ փուլում այս կամ այն նյութի, այդ թվում՝ ապացույցի արժանահավաստության գնահատումը դատարանի կողմից պետք է իրականացվի իր սրամարդության սակ եղած նյութերի սահմանափակ ծավալի

շրջանակներում և առերևույթությամբ մակարդակում: Հետևաբար, դասարանի եզրահանգումները պետք է ձևակերպվեն այդ հաշվառմամբ և չեն կարող վերածվել այնպիսի հարցերի վերաբերյալ գնահատականներ տալու, որոնք հանդիսանում են բուն արդարադատության իրականացման արդյունքում լուծման ենթակա հարցեր և դուրս են մինչդասական վարույթի նկատմամբ դասական վերահսկողության շրջանակներից:

Կալանքի պայման հանցանքը կատարած լիցենզիա հիմնավոր կասկածը հաստատող ապացույցների գնահատումը վարույթի սվյալ փուլում չի կարող վերածվել մի գործընթացի, որը պահանջում է գործի ըստ էության բնութագրումը: Ասվածը ենթադրում է, որ դատավարության սվյալ փուլում ապացույցների գնահատման բարձր չափորոշիչի սահմանումը և դրա լույսի ներքո կալանքի պայմանը հիմնավորող փաստական սվյալների բնագրումը չի բխում այդ պահին դասարանի առջև դրված խնդիրներից:

Այսպիսով, բնագրվող որոշումից երևում է, որ Դատարանը փաստացի բնութագրման առարկա է դարձրել մեղսագրվող ենթադրյալ հանցանքներից Մեղադրյալի առնչությունը հիմնավորված չլիցենզիա մասին իր հետևությունը հիմնավորել է այնպիսի հարցերի վերաբերյալ գնահատականներ տալով, որպիսիք հանդիսանում են բուն արդարադատության իրականացման գործընթացում լուծման ենթակա հարցեր և շրջանում են մինչդասական վարույթի նկատմամբ դասական վերահսկողության սահմանները: Դատարանը մեղադրյալին մեղսագրվող հանցանքները կատարած լիցենզիա հիմնավոր կասկածի առկայությունը գնահատելիս, դրա հիմքում դրված փաստական սվյալները վերլուծելիս, ըստ էության, սահմանել է ապացուցման առավել բարձր չափանիշ (հիմնավոր կասկածից վեր), քան բխում է սվյալ վարույթի խնդիրներից (ողջամիտ կասկած):

Հետևաբար, բնագրվող դասական ակտից պարզ է դառնում, որ Դատարանի կողմից անդրադարձած հարցերի շրջանակն ակնհայտորեն դուրս է մինչդասական վարույթի նկատմամբ դասական վերահսկողության սահմաններից:

Ինչ վերաբերում է ներկայացված առանձին փաստական սվյալի՝ հեռախոսահամարի էլֆային զանգերի և այդ ընթացքում սպասարկող ալեհավաք կայանների վերծանումների արժանահավաստության վերաբերյալ գնահատականներին, ապա անհրաժեշտ է արձանագրել, որ մինչդասական վարույթի նկատմամբ դասական վերահսկողություն իրականացնելիս դատարանը չի կարող այնպիսի գնահատականներ տալ ներկայացված փաստական սվյալներին, որոնք ակնհայտորեն դուրս են քրեական դատավարության սվյալ փուլի խնդիրների շրջանակներից և կազմում են գործի դասական բնութագրման առարկա:

Տվյալ դեպքում, Դատավորը, կոնկրետ փաստական սվյալի առավել բարձր արժանահավաստությունը բնագրվելով վերջնական գնահատական է տվել դրան, ինչի արդյունքում դուրս է եկել դասական վերահսկողության գործառույթի իրականացման սահմաններից՝ այդպիսով զրկելով նաև քրեական գործի դասական բնութագրման փուլում ապացույցների ազատ գնահատման հնարավորությունից:»

Նախարարը նշել է, որ Դատավորի կողմից մեղադրյալին մեղսագրվող արարքը կատարած լիցենզիա հիմնավոր կասկածի բացակայությունը հաստատելը՝ առանց պատշաճ պատճառաբանության անդրադառնալով այնպիսի հարցերի, որոնք դուրս են մինչդասական վարույթի նկատմամբ դասական վերահսկողության շրջանակներից, Տեղի են ունեցել Օրենսգրքի 135-րդ հոդվածի 2-րդ, 278-րդ հոդվածի 1-ին մասերով, 280-րդ հոդվածով, ինչպես նաև 358-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով սահմանված դատավարական իրավունքի նորմերի խախտումներ և Դատավորի կողմից թույլ տրված դատավարական խախտումները թույլ են տրվել առնվազն կոպիտ անփութությամբ, քանի որ Դատարանի կողմից մինչդասական վարույթի նկատմամբ դասական վերահսկողության սահմաններից ակնհայտորեն դուրս գալը խեղաթյուրում է քրեական վարույթի փուլային սրամաքանակային

հաջորդականությունը և խաթարում դրա առանձին փուլերի խնդիրների կատարումը և կոնկրետ նպատակների հասնելը, ինչն էլ ինքնին հանդիսանում է կոպիտ դասավարական խախտում՝ քրեական վարույթի փուլային համակարգի անսեսամամբ՝ հեղինակագրկելով դատական իշխանությունը, ինչի պայմաններում հասավորը առնվազն չի գիտակցել իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը, սակայն սվյալ իրադրությունում կարող էր և պարտավոր էր դա անել:

Միաժամանակ Նախարարը նշել է. «Սույն կարգապահական վարույթի շրջանակներում բնութայն առարկա հանդիսացող գործողություններով հասավորը, ըստ վարույթ հարուցած մարմնի, թույլ տալով առաջին ենթակետում սահմանված դասավարական իրավունքի նորմերի խախտումները, արդյունքում դրսևորել է նաև այնպիսի վարքագիծ, որի պայմաններում անաչառ և անկողմնակալ դիտորդի մոտ կասկածի տակ է դնում նաև սվյալ գործով հասավորի անաչառությունն ու անկողմնակալությունը:

Անհրաժեշտ է ընդգծել նաև, որ հասավորի կողմից թույլ տրված դասավարական իրավունքի նորմերի խախտումները հանգեցրել են նաև վարքագծի կանոնների խախտումների: Մասնավորապես, նման փաստական հանգամանքների պայմաններում, հասավորը, ունենալով բավարար գործիքակազմ և միջոցներ պատճառաբանված դատական ակտ կայացնելու և ներկայացված փաստական սվյալները գնահատելու համար, այդուհանդերձ չի պատճառաբանել այն ապացուցողական շեմը, որի պայմաններում և կայացրել է համապատասխան դատական ակտը, ինչպես նաև դուրս է եկել մինչդրատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության սահմաններից:

հասավորի կողմից վարքագծի կանոնների խախտումը կատարվել է դիտավորությամբ կամ առնվազն կոպիտ անփութությամբ, ինչն արտահայտվում է նման բնույթի դասավարական խախտումների կատարմամբ իր անաչառությունը կասկածի տակ դնելով: Նման բնույթի գործողությունները ոչ միայն կասկածի տակ են դնում հասավորի անաչառությունն ու անկողմնակալությունը, այլ որպես հետևանք, հանգեցնում են նաև դատական իշխանության հեղինակագրկմանը:»:

3. հասավորի դիրքորոշումը հարուցված կարգապահական վարույթի վերաբերյալ .

Սույն կարգապահական վարույթի շրջանակում հասավորի կողմից Նախարարին և Բարձրագույն դատական խորհրդին, համապատասխանաբար՝ բացասություն և պատասխան, չեն ներկայացվել:

4. Հարուցված կարգապահական վարույթի համար էական նշանակություն ունեցող հանգամանքները .

1. հասարանը 2020 թվականի դեկտեմբերի 17-ի որոշմամբ բավարարել է մեղադրյալ Ժ. Միրեկանյանի պաշտպանի կողմից ներկայացված բողոքը՝ բեկանել և փոփոխել Երևան քաղաքի առաջին ասյանի ընդհանուր իրավասության դատարանի 2020 թվականի նոյեմբերի 12-ի թիվ ԵԴ/0980/06/20 որոշումը, իսկ ԱԿԾ բննչական դեպարտամենտի պետին առընթեր ԶԿԳ ավագ բննիչ Ա. Երիցյանի՝ 2020 թվականի նոյեմբերի 12-ի՝ կալանավորումը որպես խախանման միջոց կիրառելու մասին միջնորդությունը՝ մերժել:

հասարանը որոշմամբ արձանագրել է, որ «(...) ինչպես երևում է բննիչի կողմից միջնորդությանը կից ներկայացված նյութերից՝ միակ փաստական սվյալը, որի վրա հիմնվել են բննիչն ու դատարանը հեռախոսային խոսակցությունների զաղտնալսման ընթացքում (...) կողմից հայտնած այն

սեղեկությունն է, որ ժիրիկը ուստի հարվածել է Արարատ Միրզոյանին, դրանից զատ այլ սեղեկություն գործի նյութերում առկա չէ»:

(...) Մեղադրանքում նշված չէ այն ժամը, երբ սեղի է ունեցել Ա. Միրզոյանի նկատմամբ բռնություն գործադրելու դեպքը, իսկ ըստ (...) ցուցմունքի դեպքը սեղի է ունեցել զիջերը ժամը 03:00-ի սահմաններում (...), մինչդեռ ըստ մեղադրյալի հեռախոսահամարից կայացած ՅԽ ելքային զանգերի և հեռախոսահամարը սպասարկող ալեհավաք կայանների հասցեները պարունակող վերծանումների՝ մեղադրյալի հեռախոսը քաղաք Երևանում սպասարկվել է 10.11.2020 թվականի ժամը 03:32-ից սկսած: (...) Այս դեպքում, հիմք ընդունելով նաև մեղադրյալի ցուցմունքն առ այն, որ ինքը որևէ առնչություն չունի դեպքի հետ, իսկ նախաքննության մարմինը դատարանին չի ներկայացրել (...) Գ. Իսրայելյանի ցուցմունքը, որը միակ ուղղակի ապացույցն է մեղադրյալի կողմից Ա. Միրզոյանի նկատմամբ բռնություն կիրառելու փաստի մասին (մնացածը ածանցյալ և անուղղակի ապացույցներ են, որոնք ոչ միայն բավարար չեն մեղադրյալի առնչությունը դեպքին հաստատելու համար, այլև ըստ էության հերքվում են գործում առկա այլ փաստական սվյալներով, ուստի Վերաքննիչ դատարանը գնում է, որ հիմնավորված չեն նախաքննության մարմնի և Առաջին ասյանի դատարանի հետևությունները ենթադրյալ հանցագործության դեպքին ժ. Միրզոյանի առնչության վերաբերյալ: (...):»:

2. Գլխավոր դատախազի սեղակալ Գևորգ Բաղդասարյանի կողմից ներկայացված վճռաբեկ բողոքի հիման վրա Վճռաբեկ դատարանը բեկանել է Վերաքննիչ քրեական դատարանի որոշումը և օրինական ուժ սվել Առաջին ասյանի դատարանի որոշմանը:

Վճռաբեկ դատարանը, մասնավորապես, արձանագրել է, որ «Վերաքննիչ դատարանը նախևառաջ հաշվի չի առել, որ ստուգման է ենթարկել մեղադրյալ ժ. Միրզոյանյանի նկատմամբ առաջին անգամ կալանավորումը որպես խախտման միջոց կիրառելու վերաբերյալ Առաջին ասյանի դատարանի որոշման իրավաչափությունը: (...) Ավելին, Վերաքննիչ դատարանը պաշտոն իրավական գնահատականի չի արժանացրել (...) ցուցմունքն այն առումով, որ Ազգային ժողովից դուրս գալուց հետո՝ մոտավորապես ժամը 03-ի սահմաններում, սեղի են ունեցել մի շարք իրադարձություններ, որից հետո է Ա. Միրզոյանի նկատմամբ բռնություն գործադրվել: (...)

(...) Վերաքննիչ դատարանը (...) հաշվի չի առել, որ մեղադրյալ ժ. Միրզոյանյանի հեռախոսը մինչ այդ՝ ժամը 04:00-ին ալեհավաք կայանի կողմից սպասարկվել է նաև դեպքի վայրին հարակից Բաղրամյան պողոտա 40 հասցեով:

(...)

(...) Վերաքննիչ դատարանը, մինչդասական վարույթի նկատմամբ նախնական դասական վերահսկողության շրջանակներում, դատարան ներկայացված նյութերում առկա փաստական սվյալները վերլուծելու և միմյանց հետ համադրելու արդյունքում այն աստիճանի ապացուցողական բնություն է կատարել, որ ըստ էության հաստատել է գործի հետագա բնության ընթացքում ապացուցման ենթակա փաստական հանգամանք: Այսինքն՝ մինչդասական վարույթի նկատմամբ դասական վերահսկողություն իրականացնելու շրջանակներում հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածի վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունը ներկայացված նյութերի, այդ թվում՝ ապացույցների՝ գործն ըստ էության բնակելու և լուծելու ժամանակ պահանջվող աստիճանի չափ խորը վերլուծության արդյունք է, ինչի հետևանքով ըստ էության խախտվել է քրեական դատավարության փուլային կառուցվածքը, քրեադատավարական գործառույթների սարանջատման սկզբունքը, իսկ մինչդասական վարույթի նկատմամբ դասական վերահսկողությունը պարունակել է

օրենական գործի ըստ էության փնտրությանը բնորոշ՝ արդարադատության իրականացման գործընթացի տարրեր:»

5. Բարձրագույն դասական խորհրդի պատճառաբանությունները և եզրահանգումները.

Քննարկելով Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը, լսելով Նախարարի պաշտոնակատարի և վերջինիս ներկայացուցիչի հաղորդումը, Դատավորի դիրքորոշումը, ուսումնասիրելով կարգապահական վարույթի նյութերը և հետազոտելով ապացույցները՝ Բարձրագույն դասական խորհուրդը զսնում է, որ ներկայացված միջնորդությունը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը լուծելու համար Բարձրագույն դասական խորհուրդն էական է համարում պատասխանել հետևյալ հարցադրումներին.

1. արդյո՞ք թիվ ԵԴ/0980/06/20 դասական գործի շրջանակներում Դատավորը թույլ է տվել դատավարական իրավունքի նորմի/նորմերի խախտում,

2. արդյո՞ք Դատավորի կողմից թույլ տրված դատավարական իրավունքի նորմի /նորմերի/ խախտումն առերևույթ պարունակում է «Հայաստանի Հանրապետության դասական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված՝ Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի հասկանիչներ:

«Հայաստանի Հանրապետության դասական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝

1) արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտումը, որը կատարվել է դիտարկությամբ կամ կոպիտ անփութությամբ.

2) դատավորի կողմից սույն օրենսգրքով սահմանված՝ դատավորի վարժագծի կանոնները խախտելը, որը կատարվել է դիտարկությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Սույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ արարքը չի համարվում կարգապահական խախտում, եթե այն, թեև ձևականորեն պարունակում է սույն օրենսգրքով սահմանված՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի հասկանիչներ, սակայն իր նվազ կարևորության պատճառով կասկածի տակ չի դնում սվյալ դատավորի համապատասխանությունը դատավորի կարգավիճակին և իր էությամբ չի կարող հեղինակագրվել դասական իշխանությունը:

Վերոգրյալ իրավանորմերի համակարգային վերլուծությունը թույլ է տալիս արձանագրել հետևյալը.

1. դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու զանցանքի կազմն ունի ոչ միայն ձևական, այլև նյութական բաղադրիչ.

2. դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու զանցանքի կազմի նյութական բաղադրիչը պայմանավորված է խախտման կարևորության աստիճանով.

3. դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու զանցանքի կազմի նյութական բաղադրիչը՝ խախտման կարևորության աստիճանը, որպես

հետևանք, պետք է կասկածի տակ դնի դատավորի համապատասխանությունն իր կարգավիճակին և հեղինակագրկի դատական իշխանությունը:

Տվյալ դեպքում, հաշվի առնելով դատավորի անկախության սահմանադրական և միջազգային իրավական պահանջները և այդ համատեքստում գնահատելու համար դատավորի կողմից թույլ տրված անձի իրավունքի խախտման ու դրանով պայմանավորված կարգապահական պատասխանատվության ենթարկելու առկայության կամ բացակայության իրավական հիմքը, որոշիչ նշանակություն է ձեռք բերում նրա կողմից թույլ տրված իրավունքի խախտման կարևորության աստիճանը:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված Բարձրագույն դատական խորհրդի համապատասխան լիազորությունների շրջանակներում, յուրաքանչյուր դեպքում արարող կարգապահական խախտում որակելու և հետևաբար համապատասխան պատասխանատվության միջոց կիրառելու համար Բարձրագույն դատական խորհուրդը պետք է գնահատի արարքի համապատասխանությունը «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված դատավորի վարձագծի ընդհանուր կանոններին կամ դատավորի վարձագծի կանոններին ի պաշտոնե գործելիս՝ բացահայտելով իրավանդությունում առկա ոչ որոշակի ձևակերպումների իրավական բովանդակությունը:

Բարձրագույն դատական խորհուրդն արձանագրում է, որ ըստ օրենսդրի սրամաքանության՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու առերևույթ հիմքեր պարունակող արարքը կարող է գնահատվել որպես նվազ կարևորություն ունեցող, եթե այն կասկածի տակ չի դնում տվյալ դատավորի համապատասխանությունը դատավորի կարգավիճակին և իր էությունը չի կարող հեղինակագրել դատական իշխանությունը:

Վերոշարադրյալը հաշվի առնելով՝ Բարձրագույն դատական խորհուրդը սույն կարգապահական վարույթի շրջանակներում բարձրացված հարցադրումներին պատասխանելու և Դատավորի արարքին գնահատական տալու համար անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալին.

1. Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Օրենսգրքի 25-րդ հոդվածի համաձայն՝ դատավորը, ինչպես նաև հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը ապացույցները գնահատում են իրենց ներքին համոզմամբ: Քրեական դատավարությունում ոչ մի ապացույց նախապես հաստատված ապացույցի ուժ չունի: Դատավորը, ինչպես նաև հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը չպետք է կանխակալ մոտեցում ցուցաբերեն ապացույցներին, չպետք է դրանց որոշ մասին մշուկների նկատմամբ առավել կամ նվազ նշանակություն տալ՝ մինչև դրանց հետազոտումը պաշտան իրավական ընթացակարգի շրջանակներում:

Միևնույն ժամանակ, ներքին համոզմամբ ապացույցների ազատ գնահատումը ենթադրում է, որ ապացույցը գնահատող անձը կաշկանդված չէ տվյալ ապացույցին դատավարության նախորդ փուլերում կամ տվյալ փուլի շրջանակներում այլ անձանց կամ մարմինների տված գնահատականներով: Նախապես հաստատված ապացույցի ուժ չունենալու օրենսդրական արգելքը բացառում է որևէ ապացույցի նկատմամբ կանխակալ մոտեցում ցուցաբերելը (մշուկ ապացույցների նկատմամբ այդ փաստական տվյալի ապացուցողական արժեքին առավելություն վերագրելը կամ այդ արժեքը նվազեցնելը), քանի դեռ

այդ ապացույցը քրեադատական օրենսգրքով ամրագրված ընթացակարգով օրինականության, մրցակցության և կողմերի իրավահավասարության, մեղադրյալի պաշտպանության իրավունքի ապահովման և այլ սկզբունքների պահպանմամբ չի հետազոտվել պաշտան իրավական ընթացակարգի շրջանակներում:

Սահմանադրության 27-րդ հոդվածի համաձայն`

1. Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով`

(...)

4) անձին իրավասու մարմին գերկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով:

Համաձայն «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 5-րդ հոդվածի`

1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.

(...)

գ. անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը` իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմին գերկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար:

Համաձայն ՀՀ քրեական դատարության օրենսգրքի 134-րդ հոդվածի`

1. Խախանման միջոցները հարկադրանքի միջոցներ են, որոնք կիրառվում են կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ` քրեական գործով վարույթի ընթացքում նրանց ոչ պաշտան վարժագիծը կանխելու և դատավճի կատարումն ապահովելու նպատակով:

2. Խախանման միջոցներն են`

1) կալանավորումը.

(...):»:

ՀՀ քրեական դատարության օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն`

«1. Հանցագործության համար կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ սույն օրենսգրքով սահմանված կարգով` դատարանի` օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

2. Կասկածյալը կամ մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը: Նրանց անմեղության ապացուցման պարտականությունը չի կարող դրվել պաշտպանության կողմի վրա: Մեղադրանքի ապացուցման և կասկածյալին կամ մեղադրյալին ի պաշտպանություն բերված փաստարկների հերքման պարտականությունը կրում է մեղադրանքի կողմը:

3. Հանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին հետևությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ:

4. Մեղադրանքն ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարսվել սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան

պատճառն իրավական ընթացակարգի շրջանակներում, մեկնաբանվում են հոգուս մեղադրյալի կամ կասկածյալի:

5. Կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ կիրառվող խափանման միջոցները չեն կարող պարունակել պատժի տարրեր»:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 2-րդ մասի՝ կալանավորումը մեղադրյալի նկատմամբ կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ կա հիմնավոր կասկած, որ նա կատարել է այնպիսի հանցանք, որի համար նախատեսվող ազատազրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը մեկ տարուց ավելի է, և կան բավարար հիմքեր ենթադրելու, որ մեղադրյալը կարող է կատարել սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ գործողություն:

Մեջբերված նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ մարդու ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքը նրա՝ Կոնվենցիայով և Սահմանադրությամբ երաշխավորված հիմնական և անբախտելի իրավունքներից է, ինչը սահմանափակելիս անհրաժեշտ է ելնել բացառապես նրա իրավունքները հարգելու, նրա հիմնական իրավունքը բովանդակելու անթույլատրելիության սկզբունքներից (*mutatis mutandis*) (սե՛ս Ս.Վվեսիսյանի գործով Վճռաբեկ դատարանի՝ 2008 թվականի թիվ ՎԿԳ/0022/06/08 որոշման 18-րդ կետը): Մարդու ֆիզիկական ազատությունը կարելի է սահմանափակել ոչ այլ կերպ, քան օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

Վճռաբեկ դատարանն իր նախադեպային որոշումներում մշտապես ընդգծել է անձի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի հիմնարար բնույթը և դրա կամայական ու անհիմն սահմանափակումները հնարավորինս բացառելու նպատակով գործունե երաշխիքների առկայության անհրաժեշտությունը:

Սահմանափակումները Վճռաբեկ դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել այն մասին, որ կալանավորման օրինականության և հիմնավորվածության ապահովման շտանկայունից կարևոր է Օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված կալանավորման հիմքերից որևէ մեկի կամ մի քանիսի և կալանավորման պայմանների (հիմնավոր կասկած, քրեական գործի առկայություն, որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման առկայություն և այլն) վերաբերյալ դատական ակտում ողջամիտ հետևությունների առկայությունը՝ հիմնավորված վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացվող ճշգրիտություններով, փաստերով կամ ապացույցներով (սե՛ս ՎԲ-132/07, ՎԿԳ/0022/06/08, ԼԳ/0197/06/08, ԵԿԳ/0580/06/09, ԵԿԳ/0678/06/10 և այլն):

Բարձրագույն դատական խորհրդի 07.06.2021 թվականի թիվ ԲԴԽ-29-Ո-Կ-11 որոշմամբ, մեջբերելով Վահրամ Գևորգյանի գործով Վճռաբեկ դատարանի որոշման վկայակոչված կետը, արձանագրվել է, որ «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մեկնաբանության համաձայն՝ ողջամիտ կասկածի չափանիշը հիմնվում է «փաստերի կամ ճշգրիտությունների առկայության վրա, որոնք հնարավորություն կտան անաչառ դիտորդին եզրակացնելու, որ սվյալ անձը հնարավոր է, որ կատարած լինելու հանցանքը: Սակայն պարտադիր չէ, որ կասկածը հիմնավորող փաստերը բավարարեն այն նույն սանդղակին, որն անհրաժեշտ է անձի դատապարտումը ... հիմնավորելու համար, քանի որ այդ փաստերը կարող են հայտնաբերվել ավելի ուշ՝ քրեական գործի քննության փուլում» (սես՝ Կ.Ֆ.-ն ընդդեմ Գերմանիայի (K.-F. v. GERMANY) գործով 1997թ. նոյեմբերի 27-ի վճիռը, կետ 57)»:

Միաժամանակ Բարձրագույն դատական խորհուրդը վերը նշված որոշմամբ արտահայտել է այն դիրքորոշումը, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետև՝ ՄԻԵԴ), «հիմնավոր կասկածի» անդրադառնալիս, նույնպես նշում է միայն կապը անձի և հանցագործության միջև, այսինքն՝ անձի առնչությունը՝ միաժամանակ սահմանելով «ողջամիտ կասկածը» հենց որպես ապացուցողական շեմ, չափանիշ, այլ ոչ թե ապացուցման առարկայի ինքնուրույն բաղադրիչ: Երկրորդ է, նշվում է, որ ողջամիտ կասկածը «հիմնվում է փաստերի կամ տեղեկությունների առկայության վրա, որոնք հնարավորություն կսաշին անաչառ դիտորդին եզրակացնելու, որ սվյալ անձը հնարավոր է, որ կատարած լինելը *հանցանքը*», սակայն ակնհայտ է, որ հանցանքի առկայությունը ապացուցելու անհրաժեշտությունը առնչությունը ապացուցելու անհրաժեշտությունից բխող, ենթադրվող բաղադրիչ է, այլ ոչ թե՝ ուղիղ սահմանվող, ենթադրելով, որ արարքի՝ բրեական օրենքի տեսակետից ոչ հանցավոր, իսկ հանցանքի՝ ոչ «կալանելի» լինելու դեպքում, անձի և այդ արարքի կապի բնությունը իրականացնելը անհիմաստ է:

Ընդ որում, ՄԻԵԴ մեջբերված նախադեպային դիրքորոշումից ուղիղ բխում է, որ թե առնչության ապացուցման անհրաժեշտությունը, և թե դրանից բխող արարքի հանցավոր լինելու ապացուցման անհրաժեշտությունը բավարարվում են առնվազն միևնույն ապացուցողական շեմով՝ հսակ նշելով, որ կասկածի հիմքում ընկած, այսինքն՝ կալանավորման հիմքում դրվելիք փաստերը պարտադիր չէ, որ բավարարեն դատարանում հիմնավորելու համար անհրաժեշտ սանդղակին: Վերջինից էլ ուղղակիորեն բխում է, որ արարքի հանցավոր լինելը նույնպես չի կարող ապացուցվել այն շեմով, որը կիրառվում է մեղադրական դատավճի դեպքում: Հետևաբար, արարքի հանցավոր լինելու՝ մեղադրանքի կողմի ապացուցման պարտականության ու դատարանի՝ ճանաչողության շրջանակները սահմանափակվում են միայն այն դեպքերով, երբ դատարանի կողմից արարքի որակյալ առթիվ արվող դատողությունները կարող են արվել առանց դատաբնության:

Առնչությունը՝ որպես բրեական վարույթի ընթացքում ապացուցման առարկայի մաս նախատեսելու՝ թե Բարձրագույն դատական խորհրդի 07.06.2021 թվականի թիվ ԲԴՆ-29-Ո-Կ-11 որոշման մեջ ուսումնասիրված Հայաստանի Հանրապետության դատավարական օրենսդրության զարգացման պատմական փորձը, և թե ՄԻԵԴ վկայակոչված վերաբերելի նախադեպային դիրքորոշումները վկայում են այն մասին, որ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու թույլտվությունը սալու մասին միջնորդություններ բնակելու ընթացքում հիմնավոր կասկածի առկայությունը ուսումնասիրելիս, դատարանների առաջնային պարտականությունը է ուսումնասիրել անձի առնչությունը մեղադրվող արարքին և միայն դրանով պայմանավորված՝ այդ արարքի հանցավոր լինելու փաստը, մասնավորապես արարքի բրեորեն արգելված լինելը, իսկ բրեորեն արգելված արարքի՝ ճիշտ որակված լինելու փաստը՝ կալանավորումը բացառող հիմքերի առկայությամբ կալանավորումը թույլ չսալու նպատակով: Ընդ որում, նշված փաստերի հաստատումը դատարանը պետք է կատարի դատաբնությանը պահանջվող ապացուցողական շեմի համեմատ ավելի ցածր շեմի կիրառմամբ և միայն այն դեպքում, երբ դա հնարավոր է անել առանց դատաբնության» (տե՛ս Բարձրագույն դատական խորհրդի 07.06.2021 թվականի թիվ ԲԴՆ-29-Ո-Կ-11 որոշումը):

Մինչդասական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելու, մասնավորապես կալանավորման վերաբերյալ միջնորդությունը

Քննելիս դասարանն իրավասու չէ թնայնաման առարկա դարձնել այնպիսի հարցեր, որոնք դուրս են այդ պահին իր առջև դրված խնդիրների շրջանակից, ուսի և հիմնավոր կասկածի առկայությունը ստուգելիս դասարանն իրավասու չէ կանխորոշելու մեղքի հարցը, իրավական գնահատական տալու անձի մեղավորությանը կամ անմեղությանը, անմիջականորեն փաստելու անձի արարքում հանցակազմի առկայությունը կամ բացակայությունը: Միևնույն ժամանակ, դասարանը, վերոգրյալ հարցերի շուրջ իրավական գնահատականներ չտալով, իրավասու է որոշում կայացնել կալանավորումը, որպես խափանման միջոց ընտրելու կամ ժամկետը երկարացնելու կամ վերահաստատելու վերաբերյալ քրեական հետապնդման մարմնի ներկայացրած միջնորդությունը մերժելու մասին՝ այն դեպքում, երբ հավաստում է քրեական գործով վարույթը բացառող հանգամանքի առերևույթ առկայությունը և դրա հնարավոր կիրառելիությունը: Ընդ որում, քրեական գործով վարույթը բացառող այդ հանգամանքի առերևույթ առկայության մասին վկայությունը պետք է լինի ոչ թե ներկայացված նյութերի, այդ թվում՝ ապացույցների գործն ըստ էության թնայնու և լուծելու ժամանակ պահանջվող աստիճանի չափ բազմակողմանի և խորը վերլուծության արդյունք, այլ այդպիսի վկայությունը պետք է հիմնված լինի ներկայացված նյութերից բխող համեմատաբար ակնհայտ փաստերի վրա:

Սույն կարգապահական վարույթի նյութերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Դասարանը 2020 թվականի դեկտեմբերի 17-ի որոշմամբ փաստել է, որ հեռախոսային խոսակցությունների գաղտնալսման արդյունքում ստացված **սեղեկությունը կարող էր բավարար լինել թնայնության առարկա դեպքին մեղադրյալի առնչությունը հիմնավորելու համար, եթե չլինեին այդ հանգամանքը բացառող ապացուցողական նշանակություն ունեցող այլ նյութեր**, որոնք իրենց օբյեկտիվ բնույթով պայմանավորված առավել բարձր արժանահավաստությամբ են օժտված, քան երկու անձի հեռախոսային խոսակցությունների ժամանակ երրորդ անձի վերաբերյալ հայտնած սեղեկությունը: Այս եզրահանգումը Դասարանը հիմնավորել է վկայի՝ դեպքի ժամի վերաբերյալ հայտնած մոտավոր սեղեկությամբ, դրան համադրելով մեղադրյալի հեռախոսահամարից կայացած ելքային զանգերի վերծանումներով ֆիքսված ժամերը, ինչպես նաև մեղադրյալի կողմից իր առնչությունը հերքելը: Մինչդեռ դեպքի հավանական ժամի վերաբերյալ վկայի ցուցումները հեռախոսային խոսակցությունների գաղտնալսման արդյունքում ստացված սվյալների համեմատ բարձր արժանահավաստությամբ օժտված լինելը Դասավորը Բարձրագույն դատական խորհրդի նիստում պատճառաբանեց նրանով, որ այդ սվյալներն ապացույց չեն հանդիսացել:

Բարձրագույն դատական խորհուրդը փաստում է, որ Դասարանը դեպքերի ժամանակագրական առումով անստեղծ է այն հանգամանքը, որ մինչև Ա. Միրզոյանին ծեծի ենթարկելը սեղի են ունեցել այլ իրադարձություններ, առանց որոնց հաշվի առնելու Դասարանը եզրահանգման է եկել դեպքերի ժամանակագրական առումով վերլուծություն կատարելիս:

Բարձրագույն դատական խորհուրդն արձանագրում է, որ մինչդասական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս դասարանը չի կարող այնպիսի գնահատականներ տալ ներկայացված փաստական սվյալներին, որոնք ակնհայտորեն դուրս են քրեական դատավարության սվյալ փուլի խնդիրների շրջանակներից և կազմում են գործի դատական թնայնության առարկա: Սվյալ դեպքում Դատավորը, կոնկրետ փաստական սվյալի առավել բարձր արժանահավաստությունը թնայնելով, վերջնական գնահատական է տալիս դրան:

Միաժամանակ Բարձրագույն դատական խորհուրդն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև հիմնավոր կասկածի առկայության գնահատմանը, մասնավորապես.

Հիմնավոր կասկածի առկայության գնահատման վերաբերյալ Վճռաբեկ դատարանը Է. Եղազարյանի վերաբերյալ թիվ ԵԱԵԴ/0017/06/16 գործով արձանագրել է. «(...) հիմնավոր կասկածը չի պահանջում կատարված արարքի մեջ մեղադրյալի մեղավորությունն ապացուցող՝ հիմնավոր կասկածից վեր ապացուցման չափանիշին համապատասխան բավարար փաստերի առկայություն, այնուամենայնիվ, «կասկածը» պետք է լինի ողջամիտ, այն պետք է հիմնված լինի օրենքով սահմանված կարգով ձեռքբերված որոշակի փաստական սվյալների վրա (որոնք կվկայեն կատարված արարքին անձի առնչությունը և դեպքի, իրադարձության համընկնումը այն հանցանքին, որի առերևույթ կատարման մեջ անձը կասկածվում /մեղադրվում/ է), իսկ դրա առկայության կամ բացակայության վերաբերյալ դատարանի հետևությունները պետք է լինեն հիմնավորված և պատճառաբանված (...)»:

Ի թիվս այլնի, վերոգրյալ կառուցակարգից է բխում այն գաղափարը, որ անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հարցի լուծման ժամանակ վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացվող փաստական սվյալները պետք է բավարարեն սուսկ հիմնավոր կասկածի առկայության պահանջին, այսինքն՝ վերջինիս կողմից ներկայացված փաստական սվյալները պետք է բավարար լինեն, որպեսզի դատարանի կողմից հնարավոր լինի փաստել մեղադրյալի **առնչությունը** նրան մեղսագրվող արարքին **կամ՝ նրա կողմից արարքը կատարած լինելու հավանականությունը**: Այնուհանդերձ, նման ապացուցողական շեմն էականորեն ցածր է անձի նկատմամբ մեղադրական դատավճիռ կայացնելու համար պահանջվող ապացուցողական շեմից և մինչդրացանակ վարույթի նկատմամբ դատական վերահսկողության սահմաններում հիմնավոր կասկածից վեր շեմի սահմանումն ուղղակիորեն դուրս կգա նշված գործառույթի սահմաններից:

Միևնույն ժամանակ, դատարանի կողմից նման միջնորդության բնույթի արդյունքում կայացվող որոշմամբ դատարանը պատճառաբանում և հիմնավորում է, թե ինչպիսի փաստական սվյալների համադրման և դրանց հիման վրա ինչպիսի շեմի հաղթահարման արդյունքում է կայացվում համապատասխան դատական ակտ: Նման դատավարական պահանջը բխում է դատարանի կողմից կայացվող բոլոր որոշումների նկատմամբ սահմանված հիմնավորվածության և պատճառաբանվածության իմպերատիվ պահանջից:

Բարձրագույն դատական խորհուրդը 2021 թվականի հուլիսի 8-ի թիվ ԲԴԽ-33-Ո-Կ-12 որոշմամբ արձանագրել է. «Ապացույցը գնահատող անձը մինչև դրանց հետազոտումը պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում չպետք է կանխակալ մոտեցում ցուցաբերի ապացույցների, չպետք է դրանց որոշ մասին մշտնջենքի նկատմամբ առավել կամ նվազ նշանակություն տա: Միևնույն ժամանակ, ներքին համոզմամբ ապացույցների ազատ գնահատումը ենթադրում է, որ ապացույցը գնահատող անձը կաշկանդված չէ սվյալ ապացույցին դատավարության նախորդ փուլերում կամ սվյալ փուլի շրջանակներում այլ անձանց կամ մարմինների սված գնահատականներով: Նախապես հաստատված ապացույցի ուժ չունենալու օրենսդրական արգելքը բացառում է որևէ ապացույցի նկատմամբ կանխակալ մոտեցում ցուցաբերելը (մշտն ապացույցների նկատմամբ այդ փաստական սվյալի ապացուցողական արժեքին առավելություն վերագրելը կամ այդ արժեքը նվազեցնելը), քանի դեռ այդ ապացույցը

քրեադատական օրենսգրքով ամրագրված ընթացակարգով օրինականության, մրցակցության և կողմերի իրավահավասարության, մեղադրյալի պաշտպանության իրավունքի ապահովման և այլ սկզբունքների պահպանմամբ չի հետազոտվել պատճառ իրավական ընթացակարգի շրջանակներում»:

Օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նույնանման փաստերով այլ գործով վճռաբեկ դատարանի կողմից իրավական նորմի մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանության դեպքում դատարանը պետք է հիմնավորի օրենքի և այլ նորմաթիվ իրավական ակտի՝ վճռաբեկ դատարանի մեկնաբանությունից շեղվելը:

Վերը նշված նորմի պահանջների ռեսուլտից, Դատարանը չի ղեկավարվել սույն նորմի պահանջներով և չի պատճառաբանել և հիմնավորել, թե իր որոշումով ինչու է շեղվել Վճռաբեկ դատարանի հանրահայտ նախադեպային որոշումներով արտահայտած դիրքորոշումից:

2. Ինչպես նշվեց, անձի նկատմամբ խափանման միջոց կալանավորման կիրառման հարցի լուծման ժամանակ վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացվող փաստական սվյալները պետք է բավարարեն սուսկ հիմնավոր կասկածի առկայության պահանջին, այսինքն՝ վերջինիս կողմից ներկայացված փաստական սվյալները պետք է բավարար լինեն, որպեսզի դատարանի կողմից հնարավոր լինի փաստել մեղադրյալի առնչությունը նրան մեղսագրվող արարքին: Այն հայտարարելով, որ անհայտն է, որ անհայտն է անձի նկատմամբ մեղադրական դատավճիռ կայացնելու համար պահանջվող ապացուցողական շեմից և մինչդասական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության սահմաններում հիմնավոր կասկածից վեր շեմի սահմանումն ուղղակիորեն դուրս կգա նշված գործառույթի սահմաններից: Հետևաբար, անմեղության կանխավարկածը՝ չփարսված կասկածներն ուսուս մեղադրյալի մեկնաբանելու պահանջի մասով, որի կիրառման անհրաժեշտությունը վկայակոչվեց Դատարանի կողմից Բարձրագույն դատական խորհրդի նիստում, չի կարող պահանջել, որպեսզի ողջամիտ կասկածից վեր շեմը կիրառվի դատական վերահսկողություն իրականացնելու ընթացքում դատական ճանաչողությամբ հետազոտվող ապացուցման առարկայի և արդյունքում արձանագրվող արդյունքների, սվյալ դեպքում՝ առնչության առկայությունը կամ բացակայությունը փաստելու համար: Հակառակ դեպքում, կստացվի, որ նույն շեմը պետք է կիրառվի մինչդասական վարույթի ընթացքում բննիչի կողմից կայացվող և դատական վերահսկողության առարկա չհանդիսացող այլ որոշումների դեպքում ևս, առաջին հերթին՝ անձին որպես մեղադրյալ ներգրավելու և նախաբանության ավարտ հայտարարելիս մեղադրական եզրակացության հաստատման համար գործը դատախազին ուղարկելու դեպքերում: Պետք է ասել, որ 30.06.2021 թվականին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 199-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բննիչի այս վերջին որոշման համար, ի տարբերություն գործող օրենսգրքով պահանջվող «բավարար ապացույցների առկայություն» շեմի, նախատեսվել է հետևյալը՝

«Եթե մինչդասական վարույթում հավաքված բոլոր ապացույցները գնահատելով՝ բննիչը հանգում է հետևության, որ վերագրվող հանցանքի համար իրավասու դատարանի կողմից նրա դատապարտումը մեծապես հավանական է, ապա նախաբանության ավարտի մասին գրավոր ծանուցում է վարույթի մասնավոր մասնակիցներին և հայտնում վարույթի նյութերին նրանց ծանոթանալու հերթը,

Ժամանակը և հաջորդականությունը՝ միաժամանակ սկսելով մեղադրական եզրակացության կազմումը»:

Այսինքն, առնչության առկայությունը չի պահանջվում հաստատել ողջամիտ կասկածից վեր ապացուցողական շեմին համապատասխան: Միաժամանակ, սակայն, նման առնչության բացակայությունը, այսինքն՝ նեգատիվ փաստը, կարող է հաստատվել միանշանակ կերպով: Այդպիսի դեպքերից է հենց այլուրեքության փաստի հաստատումը:

Մինչդեռ, սույն գործով անձի առնչությունը ողջամիտ կասկածից վեր շեմի կիրառմամբ բացակայության հաստատելու հիմք է հանդիսացել այլուրեքության հավանականությունը, այսինքն՝ անձի՝ դեպքի վայրից գալ, այլ տեղում զտնվելու հավանականությունը:

Բարձրագույն դասական խորհուրդը, ձեռնպահ մնալով դասավորի կողմից՝ անձի այս կամ այն վայրում զտնվելու փաստը հաստատող կամ հերքող ապացույցների արժանահավաստությանը տրված գնահատականի փաստական հիմնավորվածությանը գնահատական տալուց (օրինակ, արդյո՞ք թույլատրելի փաստի կանխավարկած է անձի հեռախոսի զտնվելու վայրի հիման վրա անձի զտնվելու վայրի փաստումը, արդյո՞ք համադրելի է հեռախոսի «զտնվելու վայր» հասկացությունը՝ հեռախոսակապն ապահովող ալեհավաք կայանների սպասարկման տարածքի առումով և անձի «զտնվելու վայր» հասկացությունը՝ հանցագործության դեպքի վայրի տարածքի առումով, և վերջապես՝ հաստատված այլուրեքության, այն է՝ դեպքի վայրում նրա բացակայությունը փաստող միանշանակ ապացույցների առկայության պայմաններում, արդյո՞ք հնարավոր է հաստատված համարել այլ վայրում անձի զտնվելը, և այլն) այնուամենայնիվ, զտնում է, որ անհրաժեշտ է դիրքորոշում ներկայացնել այլուրեքությանը, որպես դեպքի հետ անձի առնչությանը վերաբերող հանգամանքի մասին՝ գոյություն ունեցող դասավորության տարբեր փուլերում կիրառվող ապացուցողական չափորոշիչների բացահայտման տեսանկյունից:

Բարձրագույն դասական խորհուրդը անհրաժեշտ է համարում այս գործով անդրադառնալ ընդհանրապես բրտական գործով մինչդասական վարույթի փուլում անմեղության կանխավարկածի գործողության սահմաններին: Եսթիլառաջ պետք է փաստել, որ անմեղության կանխավարկածը մեղադրյալի իրավունքն է, որը որպես այդպիսին, պետք է ենթարկվի տարածական մեկնաբանության՝ ելնելով նաև ՄԻԵԴ կայուն հաստատված նախադեպային իրավունքով սահմանված այն սկզբունքից, որ իրավունք սահմանափակող նորմերը պետք է ենթարկվեն սահմանափակ մեկնաբանության (սպառիչ նախատեսված լինեն օրենքով և այլն): Խնդիրը կայանում է նրանում, որ բրտական դասավորության փուլային կառուցվածքը և այն ուրվագծած նորմերը, այդ թվում՝ ապացուցման չափորոշիչներ սահմանող, արդեն իսկ սահմանափակող դրույթներ են նախատեսել մինչդասական վարույթում, մասնավորապես՝ անմեղության կանխավարկածից բխող անձի ազատության իրավունքի սահմանափակման նկատմամբ դասական վերահսկողության ընթացքում կիրառվող որոշումների համար: Խոսքը վերաբերում է նրան, որ այս փուլում նշված և թվարկված այլ որոշումների ընդունման համար անհրաժեշտ հիմնավոր կասկածի շեմի բավարարվածությունը անխուսափելիորեն նշանակում է նաև հակառակի որոշակի հնարավորություն: Այսինքն, անմեղության կանխավարկածը մինչդասական վարույթում արդեն իսկ սահմանափակվում է իր այն տարրում, որ չփարսված կասկածները պետք է մեկնաբանվեն հոգույս մեղադրյալի:

Բաղկացած լինելով օրենքով նախատեսված 4 սարրից, այն է՝ 1) անձին մեղավոր ճանաչելու դատարանի բացառիկ իրավասությունը, 2) անձի մեղավորության ապացուցման պարտականությունը միայն այդ թեզը առաջ քաշած սուբյեկտի՝ մեղադրողի վրա դնելը, 3) չփարսված կասկածները հոգուս մեղադրյալի մեկնաբանելը, և 4) խափանման միջոցների՝ պատժի սարրեր չսարունակելու սկզբունքը (սես՝ ՀՀ քրեական դատարանության օրենսգիրք, հոդված 18-րդ), անմեղության կանխավարկածը բացարձակ իրավունք չէ, ինչը բազմիցս փաստվել է ՄԻԵԴ-ի կողմից, մասնավորապես՝ ապօրինի հարսացման և ընդհանրապես փաստի կանխավարկածները անձի դեմ օգտագործելով: Մինչդասական վարույթի համար անմեղության սարրերից միայն մեկն է ուղիղ և բացարձակ պահանջ սահմանում մինչդասական վարույթի համար՝ որ խափանման միջոցը չպէտք է սարունակի պատժի սարրեր, այսինքն՝ **անմեղ համարվող** մեղադրյալի համար չպէտք է առաջ զան այն զրկանքները, որոնք նախատեսված են **մեղավոր ճանաչված** դատապարտյալի համար:

Ինչ վերաբերում է անմեղության կանխավարկածի առաջին սարրին, ապա դրա սահմանափակումներն սկսկալս են ոչ արդարացնող հիմքերով քրեական հետալոումը թնհիչի կողմից դադարեցնելու դեպում: Երկրորդ սարրի սահմանափակումն առկա է փաստի և իրավունքի կանխավարկածների կիրառման դեպքերում, որի շուրջ հարուս նախադեպալին իրավունք ունի ՄԻԵԴ-ը, երբ ապօրինի հարսացման, անձի ուղեբեռում արգելված իրերի հալսնաբերման, մեթնալի սեփականաշիրոջը որպես մեթնան վարող անձ դիսելու դեպքերում, հակառակի ապացուցման պարտականությունը դնում է մեղադրյալի վրա: Այս դիրքորոշումն առավել հսակ արսացուլված է, մասնավորապես՝ *Յոն Մյուրրեյն ընդդեմ Միացյալ Թագավորության գործով* ՄԻԵԴ 1996թ. փետրվարի 8-ի վնոում (*John Murray v. the United Kingdom judgment of 8 February 1996, Reports 1996-I, § 45, կես 45, 47 և հաջորդիվ*), որում Դատարանը ընդունել է, որ՝ «իր դեմ ցուցմունք չսալու արոնությունը մսնում է կոնվենցիալի 6-րդ հոդվածի երաշխիքների մեջ: Այնուամենալնիվ, Դատարանը նաև ընդունել է, որ այդ անձեռնմխելիությունը չի կարող և չպէտք է արգելք հանդիսանա, որպեսզի այնպիսի իրավիճակներում, որոնք պարզորոշ կերպով նրանից բացարություն են սկնկալում, մեղադրյալի լոությունը հաշվի առնվի մեղադրանքի կողմի ներկալացրած ապացուլցների համոզիչ լինելը զնահատելիս: Դատարանի կարծիքով, սրանից *a fortiori* (առավել ևս) հետևում է, որ մեղադրյալի կողմից արված, իսկ հետագալում որպես ոչ ճշմարիտ հաստատված հալսարարությունից մեղադրյալի համար ոչ բարենպաս եզրակացություն դուրս բերելը նուլնպես բացառված չէ»: (Տես նաև՝ *Ռոբերտ Մինք Կոկն ընդդեմ Երդերլանդների գործով* ՄԻԵԴ որոշումը (դիմում Հ-43149/98, «Իրավունք», կես 5-րդ), ինչպես նաև՝ *Սալաբիակուն ընդդեմ Ֆրանսիալի գործով* 1988թ. հոկտեմբերի 7-ի որոշումը, (*Salabiaku v. France*), որսեղ ՄԻԵԴ-ը հսակ արձանագրեց, որ արգելված իր անցկացնելու համար պատասխանալությունը վրա է հասնում դրանք սիրապետելու օբյեկտիվ փաստի հիման վրա):

Անմեղության կանխավարկածի երրորդ՝ չփարսված կասկածները հոգուս մեղադրյալի մեկնաբանելու պահանջը նուլնպես զործում է սահմանափակ, սակալն՝ արդեն փուլալին իմաստով: Ինչպես նշվեց, մինչդասական վարույթում կալացվող որոշումների համար զործում է ոչ թե հիմնավոր կասկածից վեր շեմը, ալլ հենց հիմնավոր կասկածը, այսինքն՝ օրենսդիրը ի սկզբանե նշել է, որ հնարավոր է նաև հակառակը: Այս մեկնաբանությունն ուղիղ բխում է ՀՀ քրեական դատարանության օրենսգրքի՝ անմեղության կանխավարկածի սկզբունքն

ամրագրող 18-րդ հոդվածից, որի 4-րդ մասը սահմանում է հետևյալը, որ **մեղադրանքն ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարասվել սույն օրենսգրքի դրույթներից համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում, մեկնաբանվում են հօգուս մեղադրյալի կամ կասկածյալի:**

Փասացի, Դատավորի կողմից որպես մեղադրյալի այլուրեքությունը հաստատող փաստ դրվել է նրա՝ այլ վայրում զսնվելու հավանականությունը (ընդ որում՝ հեռախոսի զսնվելու վայրից ելնելով), իսկ այդ հավանականությունը հերքելու համար սահմանվել է օրենսդրությամբ մեղադրանքի ապացուցվածության համար սահմանված շեմը՝ ի դեմս մեղադրյալի այլ վայրում զսնվելու ուժով դեպքի վայրում նրա զսնվելու վերաբերյալ կասկածը հօգուս այլուրեքության մեկնաբանելով:

Այսինքն՝ անմեղության կանխավարկածի բոլոր տարրերի նշված բոլոր դեպքերում առկա սահմանափակումները նախատեսված են բացառապես օրենքով:

Բարձրագույն դատական խորհուրդը 2021 թվականի հուլիսի 8-ի ԲԴՄ-33-Ո-Կ-12 որոշման մեջ արդեն իսկ նշել է, որ կալանավորման համար անհրաժեշտ առնչության առկայությունը գնահատելիս, դատական վերահսկողության սահմաններից դուրս չգալու և մի կողմից դատախազական հսկողության սիրույթ, իսկ մյուս կողմից՝ արդարադատության իրականացմանը բնորոշ գործի ըստ էության բնույթից սիրույթ չներխուժելու համար, անհրաժեշտ է հանդուգվել, թե արդյոք առկա է հանցանք և արդյոք այն «կալանելի է» մեկ տարուց ավելի ժամկետով: Ինչպես նաև՝ անհրաժեշտ է, որպեսզի այդ հարցերի պատասխանը հնարավոր լինի տալ առանց դատաբանության:

Բարձրագույն դատական խորհուրդը զսնում է, որ սույն գործով բացակայում է նշված հարցերի, այն է՝ **հանցանքի և առնչության առթիվ արված դիրքորոշումներն առավել հստակեցնելու անհրաժեշտությունը:**

Ինչ վերաբերում է **առնչությանը և հիմնավոր կասկածին**, ապա դրա բնորոշումը թե ՄԻԵԴ-ի կողմից և թե Վճռաբեկ դատարանի կողմից կայուն հաստատված նախադեպային իրավունքում հետևյալն է՝ փաստերի, տեղեկությունների ամբողջություն, որոնք ունակ են ողջամիտ դիտորդի մոտ կասկած հարուցել առ այն, որ սվյալ անձը հնարավոր է, որ կատարած լինի **հանցագործություն:** Այսինքն, իրականում առնչությունը ոչ թե ինքնուրույն ապացուցման առարկա է, այլ **հանցագործությունը կատարած լինելու հավանականություն:**

Եզվածից բխում է, որ անմեղության կանխավարկածի՝ չփարասված կասկածները հօգուս մեղադրյալի մեկնաբանելու պահանջի հիմքով հիմնավոր կասկածի բացակայությունը ճանաչելն ուղիղ հակասում է՝ թե ապացուցման առարկայի՝ **հանցագործություն կատարելու հավանականության էությանը և թե՝ օրենքի պահանջին:**

Անձի՝ այլ վայրում զսնվելու հավանականությունը չի բացառում և դեռևս հավանական է թողնում նաև դեպքի վայրում զսնվելու հավանականությունը: Յե՛տևաբար, այլ վայրում զսնվելու հավանականությունը չի բացառում անձի առնչությունը հանցանքին: Այս տեսակետից, սակայն, ինչպես նշվեց վերևում, այլ վայրում զսնվելու ապացուցված լինելը բացառում է անձի՝ դեպքի վայրում զսնվելը, հետևաբար և նրա առնչությունը հանցանքին: Եվ այստեղ նույնպես կիրառելի է 2021 թվականի հուլիսի 8-ի թիվ ԲԴՄ-33-Ո-Կ-12 որոշման մեջ Բարձրագույն դատական խորհրդի կողմից նշված պահանջը՝ **այլուրեքության՝ որպես դեպքի վայրում զսնվելու, հետևաբար՝ հանցանքին**

առնչության բացառումը հնարավոր է փաստել առանց դատաբանության, մինչդեռ այլ վայրում զսնվելու պնդվող և դեպքի վայրում զսնվելու չբացառված հավանականություններն առկա են միաժամանակ և եթե չեն կարող մեկը մյուսին բացառել սվյալ պահին, ապա անհրաժեշտ է դրանց գնահատումը գործի ըստ էության բնության ժամանակ:

Եզվածը բխում է այլուրեքության բուն էությունից: Ի հակառակ Դատավորի կողմից Բարձրագույն դատական խորհրդի նիստում արված այն պնդման, որ այլուրեքությունն առկա է ինչպես այն դեպքում, երբ բացառվում է դեպքի վայրում անձի զսնվելը, այնպես էլ այն դեպքում, երբ այլ վայրում անձի զսնվելը պարզապես հավանական է, այլուրեքության բուն սահմանումն այն է, որ պետք է ապացուցված լինի անձի այլ վայրում զսնվելը, ինչը դեպքի վայրում նույն անձի զսնվելը դարձնում է անհնարին: Իսկ թե ինչ ապացույցների հիման վրա Դատավորը կհաստատի այլուրեքության առկայությունը, դա Դատավորի կողմից ապացույցների ազատ գնահատման սիրույթում է:

Այսպիսով, Բարձրագույն դատական խորհուրդն արձանագրում է, որ Դատավորը, օբյեկտիվ առումով, դուրս է եկել մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներից, քանի որ ոչ կիրառելի՝ հիմնավոր կասկածից վեր շեմ է կիրառել դեպքի վայրում զսնվելու հավանականությունն հաստատող սվյալների համար և արդյունքում՝ այլ վայրում անձի զսնվելու հավանականությունը ավելի ցածր շեմով գնահատելով՝ բացառել նրա դեպքի վայրում զսնվելը և հաստատել այլուրեքություն:

Բարձրագույն դատական խորհուրդը, հետևաբար, համաձայն է վարույթ հարուցած մարմնի հետ, որ *«...Դատավորը, ունենալով բավարար գործիքակազմ և միջոցներ պատճառաբանված դատական ակտ կայացնելու և ներկայացված փաստական սվյալները գնահատելու համար, այդուհանդերձ չի պատճառաբանել այն ապացուցողական շեմը, որի պայմաններում էլ կայացրել է համապատասխան դատական ակտը, ինչպես նաև դուրս է եկել մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության սահմաններից»:*

Սասնավորապես, Բարձրագույն դատական խորհուրդը զսնում է, որ պատճառաբանված չի եղել մեղադրյալի՝ այլ վայրում զսնվելու հավանականությունը որպես առնչությունը բացառող հանգամանք դիտարկելը և այլուրեքությունը հաստատելը՝ այլ վայրում անձի զսնվելու հավանականությամբ, ընդ որում՝ այդ հավանականությունը բացառելու համար յուրովի մեկնաբանված անմեղության կանխավարկածի հիման վրա, հիմնավոր կասկածից վեր շեմ նախատեսելով: Ստացվում է, որ անձի՝ դեպքի վայրում զսնվելը բացառվել է նրանով, որ ողջամիտ կասկածից վեր շեմով չի հերքվել նրա այլ տեղում զսնվելու հավանականությունը: Բարձրագույն դատական խորհուրդն արդեն իսկ անդրադառնալով նման շեմի կիրառման՝ դատական վերահսկողության գործառույթի համար ոչ կիրառելի լինելուն, այստեղ կարևոր է համարում ընդգծել, որ Դատավորի կողմից չի տրվել նման շեմ կիրառելու իրավաչափության պատճառաբանությունը: Իսկ այդպիսին չի կարող համարվել անմեղության կանխավարկածի ընդհանուր դատավարական սկզբունքի տարրերից մեկի՝ մեղադրանքի ապացուցվածության վերաբերյալ չփարսված կասկածներն հոգուտ մեղադրյալի մեկնաբանելու անհրաժեշտությունը, քանի որ այդ դեպքում Դատավորի ներկայացրած պնդումները կարելի է անել անկախ որևէ գործի փաստերից, հետևաբար՝ դրանք չեն հանդիսանում պատճառաբանություն:

Վճռաբեկ դատարանը Գ. Խնուսյանի վերաբերյալ թիվ ԵԷԴ/0030/01/12 գործով արձանագրել է. «ՀՀ թրեական դատավարության օրենսգրքը չի բովանդակում որևէ նորմ, որը կսահմաներ դատարանի կողմից կայացվող այլ դատական ակտերի (որոշումների) օրինական, հիմնավորված և պատճառաբանված լինելու պահանջ: Վշդուհանդերձ, հաշվի առնելով արդարադատության իրականացման ընթացքում կայացված դատական ակտերի իրավական նշանակությունը՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ թրեական դատավարության ցանկացած փուլում դատարանի կողմից չհիմնավորված, չպատճառաբանված (կամ ոչ պատշաճ պատճառաբանված) որոշումների կայացումն անընդունելի է» (կես 14-րդ):

3. Ինչ վերաբերում է նրան, որ, ինչպես նշված է Նախարարի միջնորդության մեջ, Դատավորի որոշմամբ «դատական սուբյեկտն ընթացքում խախտման միջոցի կիրառման պայմանները գնահատելիս, փաստարկվել է առանձին փաստական սվյալի առավել հավաստի լինելը և դրա արժանահավաստության վերաբերյալ հետևություններով պայմանավորվել է նաև ընդհանրապես անձին մեղսագրվող արարքում վերջինիս առնչությունը», ապա **Բարձրագույն դատական խորհուրդը չի կարող համաձայնել վարույթ հարուցած մարմնի կողմից նշվածի հիման վրա արվող այն պնդմանը, որ Դատավորի կողմից ապացույցների նկատմամբ դրսևորվել է կանխակալ մոտեցում:** Դատավորն, իրոք, կատարել է ապացույցների գնահատում, սակայն կանխակալության մասին պնդում անելու համար անհրաժեշտ կլիներ ապացույցել ոչ թե ապացույցների համակցության մեջ դատավորի կողմից տարբեր ապացուցողական միավորներին տրված տարբեր կշիռների փաստը, որը դատավորի կողմից ապացույցների ազատ գնահատման արդյունք է, այլ այն, որ նախօրոք գնահատումը և դրա ընթացքում դատավորը **նախապես** ապացույցներին մոտեցել է կանխակալ ձևով: Սա ուղիղ բխում է ՀՀ թրեական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածից, որի համաձայն՝ դատավորը, ինչպես նաև հետաքննության մարմինը, թնդիչը, դատախազը չպետք է կանխակալ մոտեցում ցուցաբերեն ապացույցներին, չպետք է դրանց որոշ մասին մշտական նկատմամբ առավել կամ նվազ նշանակություն տա՝ **մինչև դրանց հետազոտումը պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում:** Բարձրագույն դատական խորհուրդը հիմքեր չի տեսնում սվյալ գործով դատավորի կողմից նման կանխակալություն դրսևորած լինելու մասին եզրահանգում անելու համար:

4. Միաժամանակ, Բարձրագույն դատական խորհուրդը զսնում է, որ սույն գործով անհրաժեշտություն է առաջացել օրենքի և դրա մեկնաբանման արդյունք հանդիսացող դատական ակտերի կարգավիճակների պարզաբանման համար՝ հաշվի առնելով նաև Բարձրագույն դատական խորհրդի նիստում կողմերի հնչեցրած փաստարկները, մասնավորապես Դատավորի կողմից օրենքի և Վճռաբեկ դատարանի որոշումների միջև տարանջատում մտցնելու փորձը:

Վճռաբեկ դատարանի որոշումները, ինչպես և որպես դատարան հանդես եկող ցանկացած այլ մարմնի կայացրած ակտերը, չեն ստեղծում իրավունքի նորմեր, սակայն բացահայտում են արդեն իսկ եղած նորմերի այն բովանդակությունը, որը համապատասխան փաստերի նկատմամբ նախկինում կիրառված չլինելու պայմաններում մնացել էր անհայտ: Այսինքն՝ Վճռաբեկ դատարանի որոշումներով ոչ թե արձանագրվում են նոր նորմեր կամ այդ այդ նորմերի նոր բովանդակություն, այլ՝ բարձրաձայնվում է նորմերի ունեցած ներքին բովանդակությունը, որն այդ նորմերն ունեին նաև մինչև Վճռաբեկ դատարանի կողմից այդ նորմերի մեկնաբանման արդյունքում որոշում կայացնելը: Սա ընդհանրապես ներհասուկ է մեկնաբանող գործունեությանը, որը գիտական

լինելով, բացառում է ցանկացած հայտնագործություն՝ ստեղծման իմաստով, ինչպես օրինակ՝ Նյուտոնի կողմից ոչ թե ստեղծվել են ֆիզիկայի օրենքներ, այլ բացահայտվել են արդեն եղածները:

Այս մոտեցումն է, որ կարող է պատշաճ հավասարակշռում մտցնել օրենսդիր և դատական իշխանությունների միջև՝ կոնկրետ գործերով դատարանների կողմից օրենսդիր և նաև սահմանադրի ձևակերպված կամքը վերհանելու իմաստով: Յեսևաբար, Բարձրագույն դատական խորհուրդը արհեստական է համարում օրենքի և դատարանի, այն է՝ քրեական դատավարության օրենսգրքի՝ դատական վերահսկողության ոլորտը կարգավորող նորմերի և Վճռաբեկ դատարանի համապատասխան **պարտադիր** որոշումների դիխոտոմիկ տարանջատումը: Եման դասակարգումը չի բխում մի կողմից մարդկային գիտակցության ակտիվ բնույթից, և մյուս կողմից՝ իրականության՝ որպես օրենքների գործողության հետևանքների համակցության միակ գիտական ընկալումից:

Այսպիսով, Բարձրագույն դատական խորհուրդը չի կարող համաձայնել Դատավորի այն պնդումների հետ, որ Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է հակասել օրենքին: Միևնույն ժամանակ, Բարձրագույն դատական խորհուրդը զսնում է, որ նման դատողություններ անելը կարգապահական վարույթի ընթացքում իր պաշտպանական իրավունքներն իրացնող Դատավորի կողմից չի կարող հիմք լինել նրա նկատմամբ անձնական որևէ այլ անբարենպաստ հետևանքների առաջ զալու համար, քանի որ ՄԻԵԴ կայուն հաստատված նախադեպային իրավունքի համաձայն, անձի՝ իր կոնվենցիոն իրավունքներից օգտվելը չի կարող լինել պատասխանատվության հիմք:

Այս սեսակետից, այնուամենայնիվ, Խորհուրդն անհրաժեշտ է համարում անդրադառնալ Դատավորի կողմից, Բարձրագույն դատական խորհրդի նիստի ընթացքում իր պաշտպանական իրավունքներն իրացնելիս, հնչեցված երկու՝ իրար հետ ոչ լիարժեք համընկնող դատողությունների վրա: Վրաջինը վերաբերում էր նրան, որ Դատավորի որոշումը կայացվել էր Վճռաբեկ դատարանի կողմից նոր նախադեպային դիրքորոշումներ որդեգրելուց առաջ, և հնարավոր է, որ իր կողմից այդ դիրքորոշումների առկայության պայմաններում ինքն այլ որոշում կայացներ: Մյուս կողմից, սակայն, Դատավորն իր անհամաձայնությունը հայտնեց այդ դիրքորոշումների հետ կապված՝ նշելով, որ «այսօր էլ» իր նույն՝ Վճռաբեկ դատարանի կողմից բեկանված որոշումը կկայացներ:

Բարձրագույն դատական խորհուրդը 2021 թվականի հունիսի 7-ի թիվ ԲԴԽ-29-Ո-Կ-11 որոշման մեջ արդեն իսկ նշել է, որ այս, ինչպես նաև Բարձրագույն դատական խորհրդի կողմից նոր նախադեպային դիրքորոշումներ որդեգրելու փաստն ուղղակիորեն ազդում է Դատավորի մեղքի հարցի լուծման վրա՝ Դատավորի կողմից իր գործողությունների ոչ իրավաչափ բնույթը հասկանալու անհնարինության առումով: Վրաջին հարցի հետ կապված իր այդ որոշման մեջ նշել է, որ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրք» սահմանադրական օրենքի վերաբերելի դրույթներից բխում է, որ Բարձրագույն դատական խորհուրդը նախևառաջ պետք է պարզի կարգապահական խախտման օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերը, այն է՝ կարգապահական խախտման դեպքը կամ փաստը, և ապա Դատավորի սուբյեկտիվ վերաբերմունքը այդ փաստի նկատմամբ՝ թե արդյոք թույլ տրված արարքի ոչ իրավաչափ լինելը Դատավորի համար եղել է գիտակցված (դիտարկություն) կամ չգիտակցված՝ սվյալ իրադրությունում արարքի ոչ իրավաչափ բնույթը գիտակցելու ակնհայտ կարողություն և պարտավորություն ունենալու պայմանով (կոպիտ անփութություն):

Սույն գործով, Բարձրագույն դատական խորհուրդը զսնում է, որ առկա է նույն իրավիճակը, ինչ որ վկայակոչված որոշմամբ լուծված գործով: Այսինքն՝ **օբյեկտիվ առումով** Դատավորը դուրս է եկել մինչդասական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության սահմաններից՝ անձի՝ այլ վայրում զսնվելու հավանականությունը դիտարկելով որպես դեպքի վայրում նրա զսնվելը բացառող հանգամանք, և այդպիսով՝ հիմնավոր կասկածից վեր շեմը կիրառելով առնչության նկատմամբ: Այսինքն՝ խախտման դեպքն օբյեկտիվորեն առկա է: Մինևնույն ժամանակ, Բարձրագույն դատական խորհուրդը զսնում է, որ **սուբյեկտիվ առումով Դատավորը չի դրսևորել մեղավոր վարքագիծ՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ և 10-րդ մասերի պահանջների շտանկյունից: Մասնավորապես Բարձրագույն դատական խորհուրդը շեշտում է, որ հաշվի առնելով վերը քննարկված հարցերի առթիվ օրենսդրական դրույթների և Վճռաբեկ դատարանի, ինչպես նաև Բարձրագույն դատական խորհրդի դիրքորոշումների՝ պրակտիկայում առկա ոչ միաստակ ընկալումը, սվյալ գործով չի կարող արձանագրվել, որ դատավորը զիջակցել է կամ չզիջակցելու դեպքում սվյալ իրադրությունում Դատավորը ակնհայտորեն կարող էր կամ պարտավոր էր զիջակցել իր արարքի ոչ իրավաչափ լինելը, ինչը պահանջվում է «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 142-րդ հոդվածի 4-րդ, 5-րդ և 10-րդ մասերի դրույթներով: Եշվածի ուժով, Բարձրագույն դատական խորհուրդը զսնում է, որ օբյեկտիվորեն խախտման դեպքի առկայության պայմաններում, արարքը ձեռք է բերում նվազ վստահավորություն կամ՝ կարևորություն՝ ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ պահպանելով խախտման մշուս օբյեկտիվ հասկանիշները միայն ձևականորեն:**

Այսպիսով, Բարձրագույն դատական խորհուրդն ընդունում է Դատավորի հնչեցրած առաջին դատողության իրավաչափությունը: Ինչ վերաբերում է երկրորդ դատողությանն առ այն, որ նա այսօր էլ կկայացներ այդպիսի որոշում՝ չնայած Վճռաբեկ դատարանի կողմից նման որոշումը բեկանվելու փաստի, ապա Բարձրագույն դատական խորհուրդը, չընդունելով այդ դատողության իրավաչափությունը՝ դրա կանխատեսական լինելու իմաստով, այնուամենայնիվ, զսնում է, որ այն արվել է դատավորի կողմից իր կոնվեցիոն իրավունքների պաշտպանության ընթացքում, մասնավորապես իրեն վերագրվող խախտման սուբյեկտիվ կողմի առկայությունը վիճարկելու համար, և բացի այդ, վերադաս դատական ասյանների նախադեպային իրավունքի զարգացումը հիմնականում հնարավոր է արդեն իսկ առկա դիրքորոշումներից առերևույթ տարբերվող ստորադաս դատարանների որոշումների դեմ բերված բողոքները քննելու և լուծելու միջոցով: Պետք է հիշել, սակայն, որ ամեն դեպքում, Օրենսգրքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նույնանման փաստերով այլ գործով վճռաբեկ դատարանի կողմից իրավական նորմի մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանության դեպքում դատարանը պետք է հիմնավորի օրենքի և այլ նորմաթիվ իրավական ակտի՝ Վճռաբեկ դատարանի մեկնաբանությունից շեղվելը:

5. Ինչ վերաբերում է վարույթ հարուցած մարմնի այն պնդմանը, որ «Դատավորի կողմից թույլ տրված դատավարական խախտումները թույլ են տրվել առնվազն կոպիտ անփութությամբ, քանի որ Դատարանի կողմից մինչդասական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության սահմաններից ակնհայտորեն դուրս գալը խեղաթյուրում է քրեական վարույթի փուլային տրամաբանական հաջորդականությունը և խաթարում դրա առանձին փուլերի խնդիրների

կատարումը և կոնկրետ նպատակների հասնելը, ինչն էլ ինքնին հանդիսանում է կոպիտ դասավարական խախտում՝ քրեական վարույթի փուլային համակարգի անսեսամանք հեղինակագրվելով դասական իշխանությունը, ինչի պայմաններում հասավորը առնվազն չի գիտակցել իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը, սակայն սվյալ իրադրությունում կարող էր և պարտավոր էր դա անել», ապա Բարձրագույն դասական խորհուրդը կարևոր է համարում ընդգծել, որ միջնորդությամբ պետք է հիմնավորվի ոչ միայն ենթադրյալ խախտում՝ այսինքն խախտման օբյեկտիվ կողմը, այլ նաև այդ ենթադրյալ խախտման նկատմամբ հասավորի սուբյեկտիվ վերաբերմունքը, այսինքն՝ մեղքը՝ իր կոնկրետ դրսևորումներով: Չուս խախտման ենթադրյալ փաստից մեղքը բխեցնելը՝ առանց դրա կոնկրետ ձևերը՝ ի դեմս դիտարկության կամ կոպիտ անփութության փաստարկելու, կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը գրկում է պատճառաբանվածությունից:

Մյուսամենայնիվ, Բարձրագույն դասական խորհուրդը, խախտման սուբյեկտիվ կողմին առնչվող վերը ներկայացված իր հետևություններով արդեն իսկ արձանագրել է դիտարկության և կոպիտ անփութության բացակայությունը հասավորի վարքագծում՝ իր գործողությունների ոչ իրավաչափ լինելը որոշման կայացման պահին գիտակցելու անհնարիությունը հերքված չլինելու պատճառով:

Ելնելով վերոգրյալից՝ Բարձրագույն դասական խորհուրդը գտնում է, որ հասավորը, թեև օբյեկտիվ կողմից խախտել է քրեական դասավարության փուլայնությունը՝ մինչդասական վարույթի նկատմամբ դասական վերահսկողության ոչ կիրառելի ապացուցողական շեմ սահմանելով, այնուամենայնիվ, առնչությունը հիմնավորող փաստերը, տեղեկությունները և ապացույցները գնահատել է ազատորեն, առանց կանխակալ վերաբերմունք դրսևորելու, որի պայմաններում պետք է փաստել, որ չնայած իր գործողությունները, թեև ձևականորեն պարունակում են «Հայաստանի Հանրապետության դասական օրենսգիրք» սահմանադրական օրենքով սահմանված՝ դասավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի հասկանիշներ, սակայն կասկածի տակ չեն դնում սվյալ դասավորի համապատասխանությունը դասավորի կարգավիճակին և իրենց էությունը չեն կարող հեղինակագրվել դասական իշխանությունը:

Բարձրագույն դասական խորհուրդն արձանագրում է նաև, որ կարգապահական պատասխանատվության հարցի բնության պահին հասավորը չի ունեցել կարգապահական տույժ:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դասական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 94-րդ հոդվածի 6-րդ մասով, 142-րդ հոդվածի 2-րդ, 5-րդ և 10-րդ մասերով, 154-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով և 155-րդ հոդվածով՝ Բարձրագույն դասական խորհուրդը,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Մրդարադատության նախարարի պաշտոնակատարի պարտականությունները կատարող Ք. Գրիգորյանի միջնորդությունը՝ Վերաբնիչ քրեական դատարանի դասավոր Սերգեյ Մարաբյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ, մերժել:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և վերջնական է:

ԲԱՐՁՐԱՊՁՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Գ. ԶԳՆԵԳԻՐՅԱՆ

ԱՆԴԱՄՆԵՐ`

Դատուկ կարծիք որոշման պատճառաբանական
մասի վերաբերյալ

Գ. ԲԵՔՄԵՉՅԱՆ

Դ. ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ

Դատուկ կարծիք որոշման պատճառաբանական
մասի վերաբերյալ

Մ. ՄԱԿՅԱՆ

Լ. ՄԵԼԻՔՅԱՆՅԱՆ

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Դատուկ կարծիք որոշման պատճառաբանական
մասի վերաբերյալ

Վ. ՄԽԻԹՅԱՆ